

ԿՐՕՆԱԿԱՆ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՍՐԲՈՑ ԱՒԵՏ. ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿ.

(Ը. 26—57)։

26. «Եւ նաւեցին ի՛ջին յաշխարհն Գերգեսացւոց, որ է յայնկոյս Հանդէպ Գալիլեայ։ 27. Եւ ընդ ելանելն նորա ի ցամաք, պատահեաց այր մի ի քաղաքէն՝ յորում էին դեւք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ, և ո՛չ ի տան բնակեալ, այլ՝ ի գերեզմանս։ 28. Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. Զի՞ կայ իմ և քո, Յիսուս որդի բարձրելոյ, աղաչեմ զքեզ, մի տանջեր զիս։ 29. Քանզի հրաման տայր այսոյն պղծոյ ելանել ի մարդոյ անտի. զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր ի շղթայս, և պահէր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր ի դիւէն յանապատ։ 30. Եհարց ցնա Յիսուս, և ասէ. Զի՞նչ անուն է քեզ։ Եւ նա ասէ. Լեգէովն. զի դեւք բազումք մտեալ էին ի նա։ 31. Եւ աղաչէին զնա. զի մի հրաման տացէ նոցա՝ երթալ յանդունդսն։ 32. Եւ էր անդ երամակ մի խոզից բազմաց արօտական ի լերինսն. և աղաչեցին զնա, զի հրաման տացէ նոցա՝ մտանել ի նո-

սա. և հրամայեաց նոցա։ 33. Եւ ելեալ գևքն յառնէին, մտին
ի խոզեանն. և դիմեաց երամակն ի գահէ անտի ի ծովակն, և
հեղձաւ։ 34. Իբրև տեսին խոզարածքն զիրսն՝ որ եղեն, փախեան.
և պատմեցին ի քաղաքին և յագարակսն։ 35. Եւ իբրև ելին
տեսանել զգործսն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի գևքն ելեալ էին՝ զգեցեալ և զգաստացեալ նստէր առ ոտսն
Յիսուսի, և երկեան։ 36. Պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր,
թէ զի՞արդ փրկեցաւ դիւահարն։ 37. Եւ աղաչէր զնա ամենայն
բազմութիւնն շուրջ զկողմամբքն գերգեսացւոց՝ գնալ ի սահմանաց
նոցա. քանզի ահիւ մեծաւ տագնապէին. և նա մտեալ ի նաւ,
դարձաւ անդրէն։ 38. Աղաչէր զնա այրն՝ ուստի գևքն ելեալ էին,
շրջել ընդ նմա։ Արձակեաց զնա, և ասէ. 39. Դա՛ռձ ի տուն
քո, և պատմեա զոր միանգամ արար քեզ Աստուած։ Գնաց ի
քաղաքն, և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս։ 40. Եւ իբրև
դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի
ամենեքեան ակն ունէին նմա։

41. «Եւ ահա եկն այր մի, որում անուն էր Յայրոս. և նա էր
իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն Յիսուսի, աղաչէր զնա,
մտանել ի տուն նորա. 42. զի դուստր մի միամօր էր նորա՝ ամաց իբրև երկոտասանից, և էր մերձ ի մահ։ Եւ ընդ երթալն
նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա։

43. «Եւ կին մի՝ էր ի տեառատեսութեան արեան յամաց երկոտասանից, որում ոչ էր լիեալ հնար յումեքէ բժշկել։ 44. Մատուցեալ յետոյ, մերձեցաւ ի քղանցս հանդերձի նորա. և նոյն ժամայն եկաց բղխումն արեան նորա։ 45. Եւ ասէ Յիսուս. Ո՞վ է որ մերձեցաւ յիս։ Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս և որ ընդ նմա էին. Վարդապետ, ժողովուրդքդ պնդեն և նեղեն զքեզ։ 46. Եւ ասէ Յիսուս. Ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի, եթէ զօրութիւն ել յինէն։ 47. Իբրև տեսս կինն, ոչ ծածկեցաւ ի նմանէ, եկն դողալով, և անկաւ առաջ նորա, թէ վասն որո՞յ իրաց մերձեցաւ ինա, և պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն, և թէ ո՛րպէս բժշկեցաւ առժամայն։ 48 Եւ ասէ. Քաջալերեաց, դուստր. հաւատք քո կեցուցին զքեզ. երթ ի խա-

զաղութիւն։ 49. Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն ի տանէ ժողովրդապետին, և ասէ ցնա. Մեռաւ դուստրն քո, մի ինչ աշխատ առներ զդա։ 50 Իսկ Յիսուս իբրև լուաւ, պատասխանի ետ նմա, և ասէ. Մի երկնչիր, միայն հաւատա՛. և կեցցէ։ 51. Եւ մտեալ ի տունն, ոչզոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա։ 52. Լային ամենեքեան. և կոծէին զնա։ Եւ նա ասէ, Մի լայք, զի չէ մեռեալ, այլ ննջէ։ 53. Եւ նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ։ 54. Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, 55. կալաւ զձեռանէ նորա, բարբառեցաւ, և ասէ. Արի, կաց, մանուկ դու։ 56. Եւ դարձաւ ոգի նորա. և կանգնեցաւ փ՛աղմաղակի, և հրամայեաց տալ նմա ուտել։ 57. Եւ զարմացան ծնողքն նորա։ Եւ նա պատուիրէր, Մի ումեք ասել՝ որ ինչ եղեն։

Սուրբ աւետարանի այս ընթերցուածն՝ Զ. տետրում զետեղուած ընընթերցուածի շարայարութիւնն է, որը վերջացաւ այն բովանդակութեամբ, որ Փրկիչը՝ տեսնելով իւր շուրջը ժողովուած շատ բազմութիւնն, իւր խօսքին կերպը փոխեց, և սերմանացանին առակը խօսեցաւ. և առանձինն մեկնեց աշակերտներուն և նոցա հետն եղողներուն։ Եւ Փրկչին մայրն ու ազգականներն եկան, իմաց տուին և դուրս կոչեցին։ Այս պատճառով վերջացուց Փրկիչն այն խօսքն՝ որ կխօսէր Պարարտ երկրումն ինկած սերմին նմանող առաքելոց պտղաբերութեան հանգամանքներն դուշակելով, և այնպիսիներն՝ որ Աստուծոյ խօսքը կը լսեն, և կկատարեն, իւր մայրն ու եղբայրներն անուանեց։ Եւ ապա մի օր նաւ մտաւ աշակերտներուն հետ, որ ծովուն միւս կողմն անցնի. ինքն քուն եղաւ, քամիներ փչեցին, և ծովը սաստիկ ալեկոծեցաւ. աշակերտները վախցան թէ մի՛ գուցէ նաւին վտանգ պատահի, և Փրկիչն իւր քնոյն մէջ չկարողանայ վտանգէն ազատել, արթնցուցին զնա։ Փրկիչն ելաւ, սաստեց քամիներուն և ջրերուն, և հանդարտեցան. և ապա յանդիմանեց աշակերտաց թերահաւատութիւնն, որ գնա կընդունէին, թէ Աստուծոյ Քրիստոսն է, և այնպիսի վտանգներ կկասկածէին. և նաւն հանդարտութեամբ իւր գնացքը կշարունակէր։ Լսենք այժմ, և սորա շարայարութիւնն եղող այս ընթերցուածի թարգմանութիւնն ու պարզաբանութիւնը և մտախոհ լինինք Աստուծոյ սքանչելեաց վերայ, որոնք անմահ կենաց աւետիսներ կբերեն հոգևոր մարդուն, կատարելութեան ցանկացող մարդուն։

26. «Ե- Ն-Ն-Ղ-Ն, Գ-Ղ-Ղ-Ղ-Ղ-Ղ-Ն Ն-Ղ-Ն, ո- (Ն-Ղ-Ն) Գ-- Ղ-Ղ-Ն Գ-Ղ-Ղ-Ղ-Ղ-Ղ Գ-Ղ-Ն է։ 27. Ե- Ն-Ղ- Ղ-Ղ-Ղ-Ն Ն-Ղ-Ղ-Ղ-Ն՝ Ղ-Ղ-Ղ-Ն Գ Ղ-Ղ-Ղ-

տունէն, յորմէ դուրս էին։ Եւ շատ ժամանակներ հոլոս հոգած չէր, և ո՛չ տունը բնակած, այլ գերեզմաններումն (լնէր)։

Դիւահարութեան շատ տեսակները կան, որոնք ամենքն ևս՝ Աստուծոյ սահմանած մարդկային բարոյականի շաւիղներէն խոտորուած մարդկան կը պատահին. և որոնք իրենց նշաններն ունին։ Այս դիւահարի նշանն էր մերկ մնալ և մարդկան բնակութիւններէն հեռի կենալ։ Մոլի շնացողութեան բարոյից հետևանք էր, որոնք մարդկային ընկերութիւններէ հեռի մութ անկիւններու կեանքը կսիրեն։ Նա՝ աւելի ևս սաստկութեան նշան է, որ գերեզմաններումն կթափառէր որ ասել է, այն աստիճան կատաղի ցանկութեան հետևանք է, որ հոգեպէս մեռեալ համարելու արժանի էր։

28. «Եւ զՑիսուս տեսեալ, աղաղակեաց և նորա առաջն եկեալ. և ձայն ասաց. ի՞նչ անկմ (տեղ ձգ), ի՞նչ անկս (ինչ ձգ) Յիսուս, Բարձրելոյ որդի, իսպառնիմ տեղի, դ՛ տանջիր զիս։ 29. Բանի հրամայեր պիղծ դիւին, որ այն մարդէն ելլէ. զոր զի շատ ժամանակներ յափշտակել էր զնա, և շղթաներով կապուեր. երկաթներումն կապուեր, կապերն կտրտէր, և դիւն կէզուեր դէպ անապատ տեղերը։

Ինչպէս որ ստութիւնը՝ ճշմարտութենէն, և խաւարը՝ լուսէն, այնպէս կհալածուի դևն Աստուծոյ երեսէն, որ յանկարծակի վերայ հասաւ։ Դևն այլևս շփոթուած, ոտքը կընկնի, և կաղաչէ. կաղաչէ, որ իւր բունէն չհեռացնէ զինքն. բայց Փրկիչն նկել էր, որ զմարդն ազատէր դևերու տանջանքներէն. Նա կհրամայէ դևին, որ ելլէ, այն մարդէն։ Դևը փաստաբանութեան կելլէ, թէ քուկին ի՞նչդ կայ ինձ մօտ, կամ թէ ես ի՞նչ արած ունեմ քեզ, և կաղաչէ, թէ մի՛ տանջիր զիս։ Եւ կպատմէր թերևս, թէ շատ ժամանակներ է, որ այն մարդումն է, և նա իւր սեպհականութիւնն է այլ ևս, և չթողուր, որ մնայ ո՛չ շղթաներում և ոչ երկաթի կապանքներումն, այլ միշտ կքշէ դէպ անապատները։ Այս հանգամանքները՝ թէ շղթաներում կկապէին, երկաթներում կփակէին, և կապերը կկտրատէր, այս հանգամանքները ցոյց կուտան, այս դիւահարը մեծատուն էր. և զինքն պահպանողներ ևս ունէր։

30. «Յիսուս հարցուց նորան, և ասաց. ի՞նչ անուն (կոչումն) է քո։ Նա ասաց. Լեգէոն. զի շատ դիւեր մտեալ էին նորա մէջ»։

Փրկիչն՝ այս հարցումն յատուկ կհարցնէ, որ առաքեալներն իմանան. թէ դևերու մի ամբողջ բանակ է մտել այն մարդուն մէջ. մոլի շնացողութեան տարփանքներ ծնող դևեր։ Եւ թէ միևնոյն այս դիւահարի տանջանքներովը կտանջուին ամեն շնացողներ, առանց գիտնալու. որոնք բնաւ չունին բանական հոգւոյ խաղաղութիւնն ու հանգիստը. և ոչ մարդկային ճշմարիտ վայելչութիւն։ Թէ շնութեան ախտը՝ քանի նուաստութիւն է բանական մարդուն՝ իմանալու համար, հարկաւոր է միայն մարդոյն բնու-

թիւնը գիտնալ։ Մարդն արու և էգ է ստեղծուած, որ աճելութեան սերունդ ունենայ. մարդուն աճելութիւնն—որդեծնութիւնն՝ իւր շրջանաւոր ժամանակն ունի. այն է՝ ինն ամիս յղութեան օրերն, և առնուազն ինն ամիս կաթի օրերն, որով ամենակարճ շրջանն կլինի մի և կէս տարի։ Այս շրջանի բոլորման ժամանակ կատարուած զուգութիւնն է միայն օրինական՝ բանական մարդու անվթար կեանքին. որմէ խոտորելը՝ մարդկային բնութիւնը չճանաչել է, որոյ հետևանքն անզաւակութիւն է և հիւանդութիւն սերնդոց։ Ընացողներն՝ իրենցմէ կմերժեն աճելութեան օրհնութիւնն, և կհրաւիրեն իրենց վերայ հիւանդութիւններ, և որդւոց կոտորած, ու ազգատոհմի ընկումն։ Այս գործը՝ կատարեալ բանականի գործ չէ. այլ՝ շունի և խոզի բնութեան միայն յատուկ է։

31. Ե- յոդոյէին Նոյան, որ ընթանայէ Նոյա անդրանդնէրն երբեմն։ 32. Ե- ոյնպէս շատ խոզերու մի երամակ իւր ընթանալն արածող, և ասացին Նոյան, որ հրամանս տայ իրենց՝ Նոյա մէջ մտնելու. և հրամայեց Նոյա։

Մարկոս աւետարանիչը կյիշէ, թէ խոզերն երկու հազարի չափ էին. Դևերը կաղաչեն Փրկչին, որ փոխէ իւր հրամանը, և թոյլ տայ իրենց՝ որ խոզերուն մէջ մտնին, որոց բնութիւնը կսիրեն, և այն մարդուն մէջ մտել բռնել էին՝ իրենց սիրած բնութիւնը գտնելով այնտեղ։ Փրկիչը կհրամայէ, որ խոզերուն մէջ մտնեն, բայց Նոյա առաջին հրամանն յետ չդառնար, այլ խոզերն իսկոյն կհնազանդին այն հրամանին՝ ըստ այսմ։

33. «Ե- մարդին ելան դուրէն, և խոզերուն մտան, և երամին ամբն դէպ ի ծովուն դիմեց, և խեղդուեցաւ»։

Այսպէս կկատարուի աստուածային հրամանը, և գետին չընկներ։ Իսկ խոզարածներն երբ տեսան այս եղած բանը, փախան, և գացին՝ ազարակին պատմեցին։ Աստուծոյ գործած սքանչելիքը՝ թէև անապատներումը կատարուի, բայց գարձեալ կհրատարակուի. այստեղ ևս խոզարածներն՝ իրենց տէրերուն համար տանելու համբաւին հետ ամեն տեղ համբաւեցին դիւահարի բժշկութիւնն ու զգաստութիւնը։

35 «Ե- երբ ելան որ այն եղածն տեսնին, և Յիսուսի մտան եկան։ և այն մարդն՝ որմէ դուրէն ելած էին՝ (այնպէս) փառն (որ) հագուած զգեստաւորած ինոդէր Յիսուսի ոտքերուն մտա, և վախցան։

Դիւահարն իսրայէլացի պիտի լինի, ըստ որում՝ Փրկիչն՝ Իսրայէլի տան կորուսեալներն կփնտրէր դեռ ևս. իսկ խոզերու տէրերն ու խոզարածներն՝ հեթանոսներ պիտի լինին, ըստ որում՝ օրէնքը չէր թոյլատրեր Հրէից՝ որ խոզ պահէին։ Այս երկու հանգամանքէն կհետևի, որ տեսնելու ելլողներն՝ ոմանք հեթանոս էին, որ խոզերու դէպքն ստուգելու կելլէին, և ոմանք Հրէայք էին—դիւահարի մերձաւորներէն, որ այս փրկութիւնն ստուգելու կելլէին։ Ե- վախցան։ Այս վախը վախցան առաջին անգամ։

թերևս դիւահարը տեսնելով, ինչպէս որ կվախնային յառաջագոյն նորա կատաղութենէն. բայց՝ տէոնոդները պատմեցին նոցա, թէ Ինչպէս դիւահարը. և այլ ևս չվախցան ու մօտեցան Յիսուսին, որուն առջևը նստել էր բժշկուածը։ Ի հարկէ «տուգեցին ամեն մէկն՝ ինչ որ պիտի ստուգէին, ըստ որում՝ և տեսնողները պատմեցին. այս տեսնողները կլինէին ի հարկէ խոզաբածներն, երկոտասան առաքեալներն, և զգաստացած դիւահարն, և շուրջը արտօրայքումն եղողներն կամ ծովեզերքում աշխատող ձկնորսները (եթէ կային)։

37. «Ե- Բ-ՐՐ Բ-ՐՈ-ԲՆ՝ ԳԵՐՔԵ-Ա-Ց-Ց ԵՐ- ԽՈՒԴԵ-Ն ԽԱ-ԼԷՆ ՓՐԿԼԷՆ, ՈՐ ԲՆ-Ց ՆՈՑ- ՈՒՄՆՆԷՐԷՆ. ԵՎՆԷ ՈՒԺ ՈՒՆ-Վ ԲՆԷԳ-ԷԼԷՆ...»։

Զարմանալի է հեթանոսաց այս երկիւղը Թերևս Եգիպտոսի ելքէն մինչև Սամուէլի և Դատաւորներու ու Թագաւորներու օրերումն՝ իրենց վերայ յայտնուած՝ Իսրայէլի Աստուծոյ ձեռին բարձրութիւնն կյիշէին, կյիշէին թէ Աստուծոյ տապանակին առջևն ինչպէս փշրուեցաւ Փղշտացւոց Դագոնը, և թէ ինչպէս վնասուեցան այն քաղաքներն՝ ուր որ կպահէին, մինչև որ ընծայաբերութիւններ արին ու իւր տեղը խրկեցին։ Նոյն երկիւղովը կվախնան և այժմ Իսրայէլի Աստուծոյն՝ իրենց սահմաններն այցելելէն, և կաղաչեն, որ գնայ իրենց սահմաններէն, մի գուցէ այլ ևս վտանգներու պատահին։ կաղաչէին, որ գնայ, և ոչ թէ կմերժէին. ըստ որում՝ նորա զօրութենէն կվախնային։

37. «.. Ե- Ն- Ն-Ը Մ-Ա-, Ա- ՉԷՍ Դ-Ր-Ն-»։

Փրկիչն՝ հեթանոսաց աղաչանքը կընդունի և կգառնայ. ինչպէս առաքեալներուն կպատուիրէ վերջն, եթէ մի քաղաքում չընդունին զձեզ, միւսն անցէք. և ոտքերնուդ կպած փոշին ևս թոթվեցէք այնտեղ, որ իմանան, թէ մի նիւթական օգուտ քաղելու համար գնացած չէք։

38. «Կ-ՐԱՆԷՐ Ն-Ր-Ն ՈՒՆ Մ-Ր-Ի, Ա-Ա-Ի Դ-Ն-Ի՝ ԷՆԷՐ ԷԼԷ, ՈՐ Ն-Ր- ՀԷՍ ՇՐՋԻ։ Ա-Ի-Ի-Ց Ն-Ր-Ն Լ Ա-Ա-Ց։ 39. Տ-Ն-Ի Դ-Ր-ՆԷՐ՝ Լ Պ-Ա-Ի՝ ԻՆՉ ՈՐ Ի ԱՆՓՄ Ա-Ա-ԷՂ Ա-Ա-Ա-Ն։ Բ-ՐԱ-Ը ՓՆ-Ց, Լ ՀԱ-Ա-ՂԷՐ ԻՆՉ ՈՐ Ա-Ա- ԷՐԷՆ՝ Յ-Ա-Ա-»։

Բժշկուած դիւահարն ևս կվախնայ, թէ մի գուցէ չար դևերն իրեն մտնեն դարձեալ, և կկամի Յիսուսին հետ շրջել։ Բայց կբաջալերէ զնա Յիսուս, և իւր տունը կդարձնէ, որ իւր ազգին պատմէ Աստուծոյ սքանչելիքն. և այնպէս կհնազանդի մարդն ու կմտնէ Դեկապօլիս, կքարոզէ Փրկչին կատարած սքանչելիքն. «Ե- Ա-Ն-Ն ԽՈ-Ր-Մ-Ն-Յ-Ն»։

40. «Ե- ԷՐԷ ՉԷՍ Դ-Ր-Ն- Յ-Ա-Ա-, Ժ-Ղ-Վ-Ա-Ր-Դ-Ն ԸՆԴ-Ա-Ն-Ց (Դ-Ի-Ա-Ա-Ի-Ց) Ը-Ա-Ա-Ղ Ա-Ն-Ի-Ը ԽՈՊ-Ա-Ի-Ն Ն-Մ-»։

Փրկիչն յետ կդառնայ դէպ ի Կափառնայում, նորան սպասող ժողովուրդն՝ երբ կնշմարեն նաւը, կխուռնեն դէպ ի ծովեզերքն. ամենքին աչքը նաւին վերայ է, և սրտակաթ կսպասեն, որ ընդունեն. ամենքն ևս հիւանդներ ունին բերած, և բերելու են։

41. «Եւ ահա իւր մարդ, որոյ անունն Յայրոս էր, և նա իշխան էր այն ժողովրդոյն. Յիսուսի ոտքն ինկաւ, խնդրէր զնա, որ նորա տունը մտանէ, 42. Վասն զի մի միայն դուստր ունէր նա՝ քրէքի տասնիրկու տարեկան, և մեռեալ (հիւանդ) էր...»։

Իշխանն ամէնքէն յառաջ կանցնի. և կաղաչէ, որ նախ իւր հիւանդին մօտ տանի. միւս ժողովուրդը կդադարին խնդրելէ, երբ Փրկիչը կընդունի իշխանին խնդիրը։ Բայց «նորա քնացած ժամանակը ժողովուրդը խեղդեցին զնա»։ Ամենքը կճեպէին որ յառաջ գնան, Փրկչին մօտ հասնին, իրենց խնդիրքըն առաջարկեն, աղաչեն, և կամ նորա երեսը տեսնեն։

43 «Եւ մի կին (էր), տասնիրկու տարի է վեր արիւնի հոսանքի մէջ՝ նորան բժշկուելու հնար եղած չէր և ոչ ոք։ 44. Եկաւ քովէն յետակոյս, նորա հագուստի փունջին դպաւ. և նոյն ժամանակ՝ նորա արիւնի բղխումը դադրեց։

Ժողովուրդը սեղմողներուն միջին է այս կինն, կճեղքէ բազմութիւնը, կզօրանայ իւր տկարութեամբը և յառաջ կուգայ կհասնի Յիսուսին և նորա հալաւի քղանցքին ձեռք կզարնէ. (Մարկ. Ե. 25—28). տասներկու տարի կրած հիւանդութեան ծանրութիւնը, շատ բժիշկներու դիմելն ու վնասուելն, ստիպել էին որ աւելի ևս մեծ բժշկի օգնութեան դիմէ, Աստուծոյ բժշկութեանն հաւատայ, և հասնի։ Կնոջ հաւատքն այնպէս ուժգին է, որ բազմութիւնը ճեղքելու ևս կզօրացնէ զինքն. և իսկոյն կզգայ, թէ բժշկուեցաւ։ ինչպէս որ կյուսար հաւատով,

45. «Եւ Յիսուս ասաց. ո՞վ է որ ինձ դիպաւ։ Եւ երբ ամենքը խոստացան, ասաց Պետրոս և նորա հետեւողները. Վարդապետ, այդ ժողովուրդը խնդրին և ինձմէն ճնշեն։ 46. Եւ Յիսուս ասաց. Մէկը դիպաւ ինձ, քանզի գիտցայ, որ զօրութիւն ելաւ ինձմէն»։

Բժշկուողն կինն ուրախ էր, որ բժշկուեցաւ. աւելի ևս ուրախ էր, որ ոչ ոք չիմացաւ։ Վասն զի իւր հիւանդութիւնը պատմելու կամաչէր. այն պատճառաւ ևս ուրիշ հիւանդներու նման Յիսուսի ոտքը չինկաւ։ չաղաչեց, որ զինքը բժշկէ, այլ հաւատաց թէ միայն նորա հալաւէն բռնուելով կբժշկուի։ Յիսուսի հարցման՝ առաքելոց տուած պատասխանին վերայ ևս ուրախ եղաւ կինը բայց տեսաւ, որ Փրկիչէն ծածկուել կարելի չէ։

47. «Երբ տեսաւ կինը, որ նորանէն (Փրկչէն) ծածուկ չմնաց, դողալով եկաւ, նորա առաջն ինկաւ, որ ի՞նչ բանի համար նորան դիպեցաւ. և ինչպէս ժողովրդեան առջեւը պատմեց և որ ի՞նչպէս բժշկուեցաւ նոյն ժամանակ։

Կին մարդը վախցաւ, թէ ծածկապէս քսուելովն յանցանք գործած է. և դողալով եկաւ ինկաւ Փրկչին առաջն. և պատմեց, թէ ի՞նչ բանի համար մերձեցել է. և թէ ինչպէս իսկոյն բժշկուել է։ Կնոջ երկիւղն իսկոյն կփարատէ Փրկիչն, ասելով. «Քաջալերե՛ր դուստր, հաւատք քո քեզ փրկեց՝ գնա՛ խաղաղութեամբ»։ Իսկոյն սիրտ առաւ կին մարդն, իմանալով, որ յան-

ցանք չէ գործել և թէ իւր հաւատքն ուղիղ է, և բժշկուած է, այլ ևս տկար կամ անտաւոր չէ։

Տեռատես կնոջ հաւատքը պարզապէս կերևի ամեն ունկնդիր եղողի և կարելի է համեմատել ուրիշ բժշկուող հիւանդներու հետ։ Զորօրինակ Յայրոս իշխանը կհաւատայ, թէ Յիսուս կարող է նորա մահամերձ աղջիկը բժշկել, եթէ ձեռքը նորա վերան դնէ. վասնորոյ և կաղաչէ, կինդրէ, որ տունը մտցնէ։ Իսկ տեռատես կինն՝ իւր հիւանդութիւնն յայտնել կամենայ, և Փրկչին կատարած բժշկութիւններու համբաւն առած, կհաւատայ, թէ նա ամենազօր է, եթէ նորա հալաւէն միայն բռնեմ, համբուրեմ, կըբժշկուիմ։ և այնպէս կանէ։ Եւ կբժշկուի ու Փրկչէն կքաջալերուի։ Բըժշկութիւն գտնողն հաւատքն է, բժշկութեան զօրութիւնը՝ Փրկչէն կելլէ. իսկ հաւատաւոր հիւանդն՝ ոչ թէ Փրկչին կդիմէ, կինդրէ որ ձեռքը վերան դնէ, կամ խօսքով հրամայէ, և ապա բժշկուի. հապա հալաւին կքսուի, կբռնէ ձեռքով, թերևս և կհամբուրէ, և կբժշկուի։ Հալաւն ի՞նչ գործ ունի այստեղ բժշկողին և բժշկուողին մէջտեղ, եթէ ոչ միայն միջոց, ճիշդ այսպէս է և եկեղեցւում շարունակուած այն բարեպաշտութիւնն, որ հիւանդներն՝ հաւատով կդիմեն քահանային, և աւետարան կարդալ կուտան, կհամբուրեն, և կբժշկուին. Քրիստոսի գերեզմանն ուխտի կգնան, կհամբուրեն և կբժշկուին, Կենաց փայտի (Քրիստոսի խաչին) մասն կհամբուրեն և կբժշկուին. Քրիստոսի խաչի նշանին կամ խաչելութեան պատկերին կդիմեն և կբժշկուին. նոյնպէս՝ առաքելոց և ուրիշ մարտիրոսաց գերեզմանները կդիմեն, նոցա նշխարներուն և նոցա արիւնովն ոռոգուած հողերուն կքսուին ու կբժշկուին. և այս ամենն՝ հաւատքով միայն. ինչպէս որ տեռատես կինն հաւատքով մերձեցաւ Քրիստոսի հալաւին, և բժշկուեցաւ։ Այսպիսի վկայութիւն ունինք և առաքելոց գործերու պատմութեան կարգումն։

«Եւ ի ձեռս առաքելոցն լինէին նշանք և սքանչելիք բազումք ի ժողովրդեանն.. ... մինչև ի հրապարակսն հանել զհիւանդս և դնել պատգարակօք և մահճօք իւրեանց, զի ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ հովանին նորա հասցէ ումեք ի նոցանէ։ Եւ ժողովէր բազմութիւնն շուրջ ի քաղաքաց անտի Երուսաղէմ, բերէին զհիւանդս և զնեղեալս յայսոց պղծոց, որք և բժշկէին ամենեքեան»։ (Գործք. Ե. 12—16)։

«Եւ զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած ի ձեռն Պաւղոսի. մինչև ի հիւանդս տանել ի քրտանէ նորա՝ թաշկինակս կամ վարշամակս, և մերժել ի նոցանէ ախտիցն, և այսոց չարաց ելանել»։ (Գործք. ԺԹ. 11. 12)։

Ըստ այսմ մինչև անգամ առաքելոց շուքն և նոցա քրտինքը ջնջող թաշկինակն՝ հիւանդին քսուելով՝ կբժշկուէին. և չար այսերը պիղծ այսերը կելլէին։ Սուրբ Աւետարանի և Առաքելոց գործերու այս վկայութիւնները՝ բաւական են ապացուցանելու, թէ մեր եկեղեցւոյն արդարացուցած ուխտաւորութիւնն՝ զոր կկատարեն բարեպաշտներն՝ դէպ ի սուրբ տեղերն և Սրբոց Նշխարներն՝ ըստ հաւատոց կընդունին իրենց խնդիրքն. զոր ի զուր կբամբասեն լուտերականք, որոց նպատակը կամ պատճառն այստեղ բացատրելն անտեղի կլինի մեզ։ Ճշմարիտ քրիստոնեայն՝ ամեն եկեղեցւում քրիստոնեայ է. բայց տգիտութեամբ՝ իւր մայրենի եկեղեցւոյ բարեպաշտութենէն գայթակղել, և օտար դաւանութեանց դիմել. և անպատեհ խօսքերով՝ եկեղեցւոյ սրբութիւններուն և խորհուրդներուն մասին խօսել, այնպիսի անհատ՝ իբրև քրիստոնեայ չհամարուիր և ոչ մի եկեղեցւում։

Այս և այսպիսի գայթակղութիւններ՝ ինչ որ երևցել են ձեր մէջ, Համախուց Հայ ժողովրդեան մէջ, այն ամենն՝ Աւետարանի և առաքելական գրուածքներու չհանկանալէն յառաջացած գայթակղութիւններ են։ Որոց մասին զատ զատ կխօսիմք, ուր պատահինք իրենց տեղերումն. միայն թէ դուք զգոյշ եղէք այնպիսի արհամարհոտներէն. և եթէ պատահի ձեզ լսել որևիցէ գայթակղութիւն մեր եկեղեցւոյ դէմ, և չկարողանայք Սուրբ Գրոց միջոցաւը պապանձեցնել, գիտցողներուն հարցուցէք. իմ պատահած ժամանակն՝ ինձ ևս հարցուցէք. սորվեցէք, որպէս զի ոմանք որ արդէն խաբուած են՝ զձեզ ևս չխաբեն։ Դառնանք մենք մեր ընթերցուածի շարունակութեանը։

39 «Եւ էրբ նա իւրէր, ելեալ ի տանէ հարսանեաց (Յայրոսի). գոյգդ գնաց. զի յոգնեցնէր զդա (զՅիսուս)։

Յայրոսի սիրտը կտրուիէր, թէ Երը պիտի հասնի տուն, և Յիսուս իւր ձեռքը դնէ հիւանդ աղջկան վերայ, քանի որ մեռած չէ. ըստ որում նորան մահամերձ թողած էր, և եկել ծովեզերքումն կսպասէր նաւին հասնելուն։ Հատ ուրախ եղաւ Յայրոս, որ Փրկիչն ընդունեց իւր խնդիրն, և երեսը դարձուց նորա տունը մտնելու. և ճանապարհումն՝ Յեռատես կընոջ բժշկութիւնն ու պատմութիւնն տեղի ունեցաւ, որ միանգամայն Յայրոսի յոյսը կգօրացնէր, թէ՝ իւր աղջիկն ևս կբժշկուի անշուշտ. բայց այս ճանապարհումն կենալը՝ նորան հեշտ չէր երևէր. նա աւելի կշտապէր, որ աղջիկը չմեռած հասնին։ Այսպէս յուսոյ և անյուսութեան մէջ՝ ահա մի որ և է մարդ կհասնի, և կգուժէ Յայրոսին, թէ աղջիկդ մեռաւ. այլ ևս նեղութիւն մի տար Փրկչին։ Մեծատուն իշխանին տունն՝ ինչ հարկ ունէին այս գոյժը խրկելու. գիտէին, որ իշխանը գնացել է զՅիսուս կոչելու, և կուգայ անշուշտ։ Բժիշկներն

իրենց յոյսն կտրած էին տնշուշտ այս աղջկան առողջացնելու. վասնորոյ և Ցայրոս առանց դեղի բժշկողին կդիմէ։ Բայց տան կանայքն երբ կը-տեսնեն, թէ մեռաւ նոքա իրենց սով-բական հանդիսադրութիւնը կսկսին կատարել. և որպէս զի Փրկչին դալն արդելք չլինի իրենց, այս լուրը կխրկեն, որ այլ ևս չտանի Ցայրոս զՓրկիչն։ Ցայրոս կյուսահատուի, և կյայտնէ Փրկչին, թէ արդէն մեռել է իւր աղջիկն։ Իսկ Փրկիչն կը-յուսադրէ զնա, խղճալով նորա հաւատքին և այլայլութեանը։

50. «Իսկ Յ[illegible] էրբ լսեց, [illegible] [illegible] նոյն, և ասաց. Մի՛ վախնար, միայն հաւատա, և կենդի»։

Փրկիչն այնչափ միայն կխօսի, որ Ցայրոս քաջալերուի, և զօրանայ իւր հաւատքումն. և իմանայ դեռ ևս իւր ներկայութեանը բժշկուող տեռատես կնոջ հաւատքին զօրութիւնը, թէ ինչպէս բժշկուեցաւ տասներկու տարիներէ ի վեր իւր վերայ հնացած ցաւէն։ Ցայրոս՝ թերևս կմտիշէր և հռովմայեցի հարիւրապետի ծառայի բժշկութիւնն, որուն համար հարիւրապետն՝ Հրէից ծերերն խրկել էր Փրկչին, և թերևս այն ծերերէն մէկն՝ ինքն Ցայրոս էր. և այժմ կմտիշէր, թէ այն մերձ ի մահ եղող ծառայն ինչպէս բժշկուեցաւ փրկչին խօսքովն, որ դեռ ևս հեռուէն ասաց։ Եւ այժմ նոյն Փրկիչը կասէ. «Մի՛ն հաւատա, և կենդի»։ Ի հարկէ անհերկմիտ հաւատով հաւատաց Ցայրոս, և նոյն հաւատովն կշտապէր ու կշտապեցնէր զէպ ի տուն։

51. «Եւ դառնը մտաւ, և ոչ մէկին չթողուց ներս մտնել. բայց միայն Պետրոս, [illegible], և [illegible] հայրն ու մայրն»։

Եռեռ եկող բազմութիւնը շատոր էր և ճանապարհումն ևս կանդէին ու կնեղէին. մանաւանդ որ հիւանդին մեռնելու դոյժն, և Փրկչին՝ կենդանացնելու խոստումն՝ ամենքին հետաքրքրութիւնը կարթնցնէին, և ամենքը կշտապէին ներս մտնել. միւս կողմէն հիւանդին ազգականներն ևս ներսը լեցուած էին վասն որոյ և բազմութիւնն յետ կնցնելու համար իւր աշակերտներն ևս դուրսը կթողու, և երեքն միայն կառնու հետն, որ ինչոր տեսնեն ներսումն, նոյնը պատմեն իրենց ընկերներուն։ Ժողովրդեան բազմութենէն ոչ ոք ներս չառնուր, բայց միայն հիւանդին հայրն, և ներսն եղող բազմութենէն կառնու միայն հիւանդին մայրն. և այս հինգին հետ կմտնէ հիւանդին մօտ։

52. «Ամենն կուլային և կոծէին զնա (հանդերձն՝ որ մեռեր էր)։ Եւ նա ասաց. Մի՛ լայ. վասն զի մեռած չէ, այլ քունն կլինի»։

Հիւանդի սենեակը կմտնեն, և մեռել կգտնեն, և ամբոխն առ հասարակ կուլան ու մեռելին կզարնուին։ Նոքա երկու կողմերնին ևս չեն նայիր, չեն տեսներ, թէ Փրկիչն եկաւ, այն Փրկիչն. որուն համբաւն առել էին յառաջագոյն, թէ Նային քաղաքի դռնումն միամոր մի մանկան դագաղին

վերայ կանչեց, և կենդանի իւր մօրն յանձնեց։ Կին մարդկանց բազմութիւն, որ խորհելէ և յիշելէ աւելի՝ իրենց երգն ու պարն կշարունակեն. սովորական մեռելներու վերայ կատարածնուն նման։ Փրկիչն այս լացով համակուած կանանց հաւատքն արթնցնելու համար, ձայն կուտայ. թէ Մի՛ լայք. ձեր լացին ու կոծին ժամանակ չէ այդ աղջիկը մեռած չէ, այլ քուն կլինի։

53. «և նոքա կծաղրէին զնա, զի գիտէին, թէ մեռեալ է։»

Բայց ո՞վ կլսէ Փրկչին ձայնը, լացողներն իրենց լացը կշարունակեն, իսկ երկու կողմն նայողները կծաղրեն, ըստ մարդկային տկարութեան՝ իրաւունք ևս ունեն ծաղրելու. զի հաստատ գիտէին, թէ մեռեալ է արդէն. և չեն կարողանար հաւատք ընծայել քուն լինելու խօսքին։ Ըստ որում չհաւատացին Փրկչին խօսքին, և միանգամայն ծաղրեցին, որով և ցոյց տուին, թէ չհաւատացին, թէ Փրկիչը կարող է կանչել և յարուցանել նաև այս աղջիկն, ինչպէս որ Նայինի այրիի որդին. նոցա այս անհաւատութիւնը կմերժէ Յիսուս, և ամենքը դուրս կհանէ մեռելի սենեկէն. նոքա դրսումն ևս իրենց խօսքը կպնդեն, թէ քուն չկայ, մեռած է։ Թէ այս լացող կանանց դուրս արաւ՝ նոցա անհաւատութեան պատճառաւն, ունենք մի նման վկայութիւն՝ զոր բացարձակ կերպով կգնեն Մատթէոս և Մարկոս աւետարանիչներն. ըստ այսմ։ «և՝ ոչ արար անդ զբօսութիւն բազո՛ւ վասն անհաւատութեան նոցա։» (Մատթ. ԺԳ. 58.)։ «և՝ ոչ կարէր անդ և ոչ մի ինչ զբօսութիւն առնել, բայց ոմո՛ւ հիւանդաց յերեսս եդեալ բժշկեր զնոսա։ և զարմանայր վասն անհաւատութեան նոցա։» (Մարկ. Ե. 5. 6)։ Թէ Փրկիչն իւր գաւառի ժողովրդեան անհաւատութեանն համար այն տեղ զօրութիւն չկատարեց, այս երկու վկայութեանց համաձայն վկայել կերևի և Ղուկաս Աւետարանիչ. Դ. 23—27։ Այս վկայութիւններէն կհետևցնենք, թէ անհաւատութեան պատճառաւ դուրս հանեց այս ծաղրողներն, և իրեն հետառաւ հաւատացող ծնողքն և երեք աշակերտներն։

54. «և՝ ելն՝ զոսա հանէր. 55. բռնեաց նորա (զձեռսն) յերեսէն. խօսեցաւ, և ասաց. ո՞վ Մանո՛ւկ, քո՛ւր քոյ, յարիջիր։» 56. և՝ նորա ոգին դարձաւ, և յոտն եաւ յարիջանեցաւ, և հրամայեաց որ տարեալ (բան) տան նորան։ 57. և՝ նորա ծնողքն զարմացան։ և՝ նա խստիւ արգիլեր, զի ոչ ոք զսոսին ինչ որ եղաւ։

Փրկչին ձայնն՝ Աստուծոյ ձայն է. կկանչէ մեռելին, և կկենդանանայ. ձեռքէն կբռնէ, կկանգնի, և կգնայ, և ծնողքն՝ որ մի փոքր յառաջ լաց կլինէին, այժմ կզարմանան, որ իրենց դուստրն կենդանի է։ Որպէս զի առաւչաք երևոյթ մի չկարծեն, կհրամայէ Փրկիչն, որ կերցնեն կզարմանան ծնողքը «մեծ զարմանքով». իսկ Փրկիչը կպատուիրէ նոցա, որ չհամբաւեն, ոչ ոքի չասեն։ Բայց ինչպէս կարող են այսպիսի սքանչելիքը լռել «Եւ այս համբաւը՝ բոլոր այն երկիրը տարածուեցաւ» (Մատ. Թ. 26)։

Ահաւասիկ այս ընթերցուածումն՝ մեր ոչքին առջևն կատարուածի նման կտեսնենք Փրկչին կատարած սքանչելիքներն. թէ ինչպէս սաստեց լեգէոնին, որ ելլէ այն մարդէն և գնայ անդունդներն. և թէ ինչպէս խոզերուն հետ միասին խեղդուեցան ջրերումն, և թէ դիւաց լեգէոնն ինչպէս կաղաչէր, որ չտանջէ զիրենք. բայց Փրկիչն հեռացոյց զնոսա. որպէս զի այն ճանապարհներումն այլևս արգելք չլինեն մարդկան անցուդարձին, «որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ» (Մատ. Ը. 58)։

Թէ ինչպէս կսպասէին Գալիլեայի ծովեղերքումն հիւանդ ունեցող ժողովուրդն, և թէ ինչպէս բժշկուեցաւ տեռատես կինն իւր ծածուկ հաւատքին ուժովն. և թէ ինչպէս կենդանացաւ Իշխանի դուստրն՝ ծնողաց հաւատքին շնորհիւն։

Եւ մեք հաւատանք Փրկչին կատարած փրկագործութեան. ճշմարիտ քրիստոնէին բարոյականումն կատարեալ լինելու հետևենք, որպէս զի Փրկըչին հալածած հիւանդութիւններն ու սխտերն հեռի հեռանան մեզմէն. և մեք ապրենք քրիստոնէութեան հոգևոր կեանքումն՝ լոյս լինելով շրջակայ հեթանոսներուն և այլակրօններուն. հեռի լինենք հպարտութենէ, նախանձէ, և խոնարհութիւնն ու հեզութիւնը բնակեն մեր մէջ, արդարութեան շաւիղներուն նախանձախնդրը լինենք, որով միայն արժանի պիտի լինենք Փրկչին խոստացած երանութիւններուն՝ հաւատով ակն ունելով Փրկչին գալստեանը։

ԹԷ Ի՞ՆՉ Է ՄԱՏԱՂՆ՝ ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՏՕՆԵՐՈՒՄՆ

Այսօր մի քանի մարդկան խօսակցութիւնն լսեցի, որոցմէ ոմանք գայթակղել են երբեմն, և համարել, թէ մեր եկեղեցւոյն թոյլատրած մատաղն՝ կամ հեթանոսական զոհն է, կամ հրէական զոհն. և արժան չէ քրիստոնեայ եկեղեցւոյն՝ որ Քրիստոսի տեառն մերոյ խաչելութենէն ետքն՝ որով մովսիսական զոհերը խափանեցան՝ այլ ևս շարունակէ և զոհէ թէ եկեղեցւոյ գաւթում, թէ տներում և թէ ուրիշ սրբավայրերում։ Այս գայթակղութիւնն ի հարկէ երբեմն շատերուդ լսելի եղած է. թերևս և ուրիշ շատերդ այսպէս գայթակղել էք. այժմ այսչափ տեղեկանալէ ետքն՝ կարևոր կհամարեմ այս օր ուղղել այս գայթակղութիւնը ծնեցող սխալն. և դուք ուշադրութիւն դարձուցեք, մեր եկեղեցւոյն մէջ շարունակուած այս սովորութեան բուն նշանակութիւնն—պատճառն ու նպատակն սորվեցէք, որպէս զի ուրիշ անգամ ընկերակցութեանց մէջ եթէ լսէք ուրիշ մի անձին գայթակղութիւնը. կարողանայք ուղղել այս սխալն. և առանց խղճահարութեան պահել և շարունակել նախնի եկեղեցւոյ այս ողորմութեան գործը։

Որքան որ տեղեկացայ նոյն խօսակցութեան մէջ՝ այս գայթակղութիւնը ծագել է սկզբումն՝ քրիստոնէական եկեղեցւոյ սահմանած մատաղը՝ մովսիսական զոհին հետ շփոթելովը և այս շփոթութիւնը՝ չարամտութեամբ խմորած շփոթութիւն չէ՝ այլ սոսկապէս՝ Սուրբ Գրոց թարգմանութեան Հայերէն լեզուին հմտութիւն չունեցող մի միամիտ մարդու սխալ կարծիք է. և այս յառաջացել է այսպէս։

Աստուածաշունչ Գրոց Հին Կտակարանի մասումն՝ մովսիսական զոհն՝ թարգմանուած է ՝ՀՈՒ բառով՝ որ իսկապէս ՝ՀՈՒ է հայերէն լեզուով՝ և ոչ ուրիշ բան։ Իսկ սուրբ Գրոց Նոր Կտակարանի մասումն՝ մատաղ բառը չերևևեր. որ ամեն ոք գիտնար՝ թէ ուրիշ բան է զոհն՝ ուրիշ բան՝ մատաղն։ Այս մատաղ բառն՝ Սուրբ Գրոց Նոր Կտակարանի մասումն՝ այսպէս գործածուած է։

«Եւ էին Հանապազորդեալ վարդապետութեան առաքելոցն և հաղորդութեան. բեկանելոյ հացին՝ և աղօթից»։ (Գործք Բ. 42)։

Այս պատմական վկայութեան մէջ՝ առաքելոց քարոզութեամբը մկրտուած հաւատացելոց միասին գալու սովորութիւնն ու նշանակութիւնը միանգամայն կտեսնուի։ Հանապազորդել՝ ՈՒՆ էր որոշեալ ժամամ ընելոյ կնշանակէ։ Հաւատացեալները կհանապազորդէին՝ այսինքն ամեն օր ներկայ կգտնուէին՝ ա. առաքելոց քարոզելոն. բ. հաղորդելոն. գ. հաց կոտրելոն. դ. աղօթի։ Ամեն օր միասին կատարելու սովորութիւնն այս չորսն է. որոնք պարզ են. սոցա մէջ երրորդ տեղը բռնած՝ հաց կոտրել սովորութիւնն՝ աշխարհիկ լեզուումն՝ ճաշ ուտել կասեն Հայերեն. և զանազան գաւառներում՝ զանազան անուններ ևս կգործածեն։ Գործք Առաքելոցին նոյն ընթերցուածին հետևորդ երկու համարն՝ որ կարդանք՝ աւելի ևս լուսաւոր կերպով կտեսնենք պատճառը՝ թէ ինչո՞ւ առաքեալներն և ուրիշ հաւատացեալներն ամեն օր միասին կժողովէին և կկտրէին հացը։

«Ամենայն հաւատացեալքն էին ի միասին՝ և ունէին զամենայն ինչս հասարակաց։ Եւ զստացուածս և զինչս վաճառէին՝ և բաշխէին զայն ամենեցուն՝ ումմ զիարդ ինչ պիտոյ լինէր։ Հանապազօր կանխեալ միաբանութեամբ ի տաճարն. և ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԲԵԿԱՆԷԻՆ զհացն՝ և ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԿԵՐԱԿՈՒՐ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ՈՒՐԱԽ»։ (Գործք. Բ. 44 – 46)։

«Հաւատացեալներն ամենքը միասին էին՝ և իրենց ունեցած նիւթերքն՝ հասարակաց էր՝ ամենուն էր. և ստացուածքնին և գոյքերնին կվաճառէին՝ և նոյնը կբաժնէին ամենուն՝ որուն որ ինչ կերպ պէտք լինէր. ամեն օր միասին տաճարը կգնային՝ (աղօթելու համար՝ առաքելոց քարոզին լսելու համար). և տունն (եղած միջոցին) հացը կկտրէին և

կերակուր կառնէին ուրախ ու միամիտ սրտով։ Որմէ կտեսնենք, որ հաւատացեալներէն ունեւորներն՝ իրենց ունեցածը կվաճառէին և նորա գինն հասարակաց ստացուածք կլինէր, և ով ինչ պիտոյք ունենար, այն գումարէն կհոգային. այս միաբանութիւնը կամ ընկերութիւնն՝ աղքատութիւնն հարստացնող դրութիւն մի է. որ կլինի չափաւոր ծախքով, և արժանագին նիւթեր միայն գործածելով։ Թէ հաւատացելոց մեծ մասն աղքատներ էին, յայտնի կլինի Գործոցի հետևորդ գլուխներումն, ուր կյիշէ զԲառնաբաս միայն, թէ մի դիւղ ունէր, և վաճառեց ու գինը բերաւ. և երկրորդ կյիշէ զԱնանիա և Նորա կինն զՍափիրայ՝ որ իրենց ագարակը վաճառեցին, բայց գինը լման չբերին։ Այսպէս քիչ ունեւորներ և շատ չքաւորներ միաբանած տեղն՝ արժանագին կերակուրներ միայն կարելի է գործածել. որ ամենքն ևս լիանան։ Այս արժանագին կերակուրն՝ որ երբեմն փոքր փոքր կլինէր հայերն սովորել են անուանել մատաղ. իբր թէ ցամաք հացն համեմող մի բոլ։ Այս անունն անուանել են Հայերն Դ. դարէն վերջն, երբ բովանդակ Հայաստանում տարածուած էր քրիստոնէութիւնն և կպաշտուէր առաքելական դարերու հաւատացելոց սովորութեամբն հանդերձ։

Ինչպէս որ առաքեալներն՝ իրենց աւուր հաւատացեալներու աղքատութեան նեղութիւնն վերցնելու համար սկսեցին այս հասարակաց սեղանը, նոյնպէս և ամեն ազգաց եկեղեցիներն՝ իրենց աղքատներուն կարօտութիւնը վերցնելու համար շարունակեցին այս առաքելական սովորութիւնն։ Եղաւ ժամանակ, որ քրիստոնէութեան հալածանքը վերցաւ, և աղատ հաւատացեալները՝ քրիստոնէական բարոյականի շաւիղներումը զօրացան, աճեցան և հարստացան, այնուհետև այս ամենօրեայ միասին հաց ուտելու կերակրուելու սովորութիւնը տակաւ վերացաւ. նոյնպէս և Հայոց ժողովուրդներումը պատահեցաւ։

Բայց Հայաստանեայց եկեղեցումն իսպառ չվերջացաւ այս սովորութիւնը. այլ հաղորդութեան օրերում մանաւանդ տարեկան տօներումն անխափան պահեցին այս միաբանական սեղանն. և այսպէս առաքելական սովորութիւնը մինչև այսօր կպահպանուի Հայաստանի ժողովուրդներում, այնպէս որ շատ եկեղեցիներ՝ ունին իրենց դաւթումն խոշոր կաթսաներ և բաղմաթիւ պղնձէ խաներ՝ այս հասարակաց սեղանի կերակուրն պատրաստելու և մատակարարելու համար. և մինչև այսօր իսկ շատ տեղերում՝ տաղաւար օրերն՝ այս հասարակաց սեղանը կպատրաստուի եկեղեցիներու դաւթումն. և ամեն քրիստոնեայ ընտանիք իրենց ձեռքի բաւականութեան չափով կմասնակցին այն սեղանի պիտոյքը լմնցնելու։

Մի քանի ժողովուրդներում՝ այս հանրական սեղանը չկայ, այլ պատրաստած կերակուրը—մատաղը կբաժանեն ամենքին, և տոքի վերայ կվա-

յելեն, և ողորմի կարդալով կգնան. այս տեսակ մատաղը՝ սովորաբար Բաժինք կանուանեն, տեղ տեղ՝ Բիժոյ, որ կնշանակէ պատառ, և որ Բաժինի փոքրին անունն է. Բաժինքն յառաջ եկած է այն պատճառէն, որ շատ անգամ ժողովուրդը բազմեցնելու բաւական տեղ չլիներ եկեղեցւոյ գաւթումն. Եւ երկրորդ պատճառ մի ևս է բաժինքին՝ այն հանգամանքն՝ որ բաժինքը կպատրաստուի մի կամ մի քանի մասնաւոր անձերէ, և ոչ ընդհանուր եկեղեցիէն. վասն որոյ և հազիւ փոքր փոքր կհասցնեն ամենուն. Այժմ բաժինք կուտան սովորաբար այն տներն՝ որ մկրտութիւն կամ հարսանիք ունին, կամ թէ մեռելաթաղ ունին. Հին դարերումն այս ողորմութեան կերակուրն՝ եթէ ջրի կերակուր էր, ջրոյ կասուէր. իսկ եթէ թանձր կերակուր էր, մատաղ կասուէր. այնպէս որ այժմ ևս շատ տեղերում՝ մատաղ անունով հաց կբաժանեն, և կամ խաշու կբաժանեն.

Կարծեմ հասկանալի եղաւ արդէն, թէ մեր եկեղեցւոյն մատաղը՝ զոհ չէ, այլ հասարակաց կերակուր, աղքատի կերակուր. և ուղղակի առաքելոց ժամանակէն սկսուած և մինչև մեր օրերը շարունակող սովորութիւն է. Ձեր մէջ ծագած գայթակղութիւնն՝ ինչպէս յառաջ ասացինք տեղիք առել է միայն այն դէպքէն, որ ձեր կարդացողներն Հին Կտակարանի զոհը մատաղ կանուանեն՝ որպէս թէ ձեզ հասկանալի անելու մտօք. և կդառնան եկեղեցւոյ մատաղը՝ զոհ կանուանեն՝ հայերէն Աստուածաշունչի լեզուն հասկացող երևնալու մտօք. Այս միևնոյն սխալն՝ այժմու հայերէն շատերն՝ որոնք ինքզինքնին գիտուն կանուանեն կամ գոնէ կարդացածնին հասկացող կհամարուին՝ այսպէս սխալուած են. որոց ոմանց գրութիւններումը կարդացել եմ երբեմն մեր լրագրներումն՝ որ ուխտաւորաց՝ վանքերում կամ ուխտատեղերում ոչխար կամ աքաղաղ մորթելն՝ զոհ ասել կանուանեն. փոխանակ ասելու մատաղ անել. այն պարոններն՝ ինձ կերևի, թէ մատաղ բառն՝ հասարակաց բառբառում գործածական եղածէն՝ իրենց գրչին վայելուչ չեն համարիր, և կուզեն գրաբար կամ գրական լեզուին հմուտ երևնալ, և այսպիսի մի խոհականութիւն միայն է ձեր մէջ ծագած գայթակղութեան պատճառն, այսինքն՝ մի որևիցէ պարոն՝ չգիտնալով Հայոց մատաղին սկզբունքն, և չկամենալով լսել մի հմուտ մարդու, ինքնիրեն համարել է, թէ զոհ պիտի լինի. Դուք գիտցէք, թէ զոհը՝ մատաղ չէ. մատաղն ալ՝ զոհ չէ. Այլ մատաղն՝ աղքատ հասարակութեան միաբանութեան կերակուրն է՝ իբրև ողորմութիւն հաստատուած և պաշտուած.

Կ. Վ. ՍՐԱՊԵԱՆ.

12 Յուլիսի 1891.